

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԹԱՏԻՐՆ

№ 8.

Փոխ. կ. ՄԻՐՅԱՆԵԱՆ

# ՏԻԿԻՆ ՄԻՐԱՆ

Կոմեդիա մէկ արարածով



Թ Ի Յ Լ Ի Ս

Էրկերասպ. Օր. Կ. Ազոմեանի, Պոլից. 7

1913

891.7ԸԿ

Գ-62



ՏԻԿԻՆ ՍԻՐԱՆ

**ՏԻԿԻՆ ՍԻՐԱՆ**  
 Կոմ'նզիա մ'էկ արարւածով

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

Տիկին Մարիամ՝

- Սուրիկ
  - Աշոտիկ
  - Աննիկ
  - Նազիկ
  - Ասողիկ
- } նրա զաւակները՝

Հերիքնազ — խոհարարուհի  
 Օսան — գայիակ

Բաւական լաւ կահաւորւած սենեակ: Աջ կողմից — պահարան թէյի ամաններով, բուլկիներով, շաքարով, թէյով և ուրիշ նման պարագաներով: Զախ կողմից ճոճաթոռ: Զանազան տեղերում սեղաններ, աթոռներ և բազկաթոռներ: Աթոռներից մէկի վրա դրւած է սեղանից վերցրած մի գունաւոր սփռոց: Սեղանի շուրջը նստած են՝ Աննիկը, Նազիկը և Ասողիկը ու գրքից արտադրում են տեսրակների մէջ: Աջ կողմից պատուհանի մօտ նստած է Աշոտիկը գիրքը ձեռին և փրփրալով սովորում է Յովն. թումանեանի «Շունն ու կատուն»: Ճոճաթոռի վրա նստած է Սուրիկը և խորը քնած է. նա ձեռին ունի մի բաց գիրք:

Տ Ե Ս Ս Ր Ա Ն Ի .

ԵՐԵՆԱՆԵՐ

ԱՇՈՏԻԿ. (սովորում է «Շունն ու կատուն»):  
 ԱՍՏՂԻԿ. (Աշոտիկի կարդալուց յետոյ) Ահա



13535-07

Ես վերջացրի (գրածը չորացնում է ծծանով):

**ԱՆՆԻԿ.** Ես էլ գրեցի (Տետրակի մէջ դընում է ծծանն ու փակում):

**ՆԱԶԻԿ.** Իսկ ինձ մուտ է երեք բառ (շտապ արտագրում է և տետրակի մէջ ծծան շրջնելով փակում է. Սուրիկը խորմփում է):

**ԱՍՏՂԻԿ.** (շուռ գալով) Հա, հա, հա, մի տեսէք, մի տեսէք Սուրիկը քնել է (ամենքը նայում են Սուրիկի վրա և փրոթկում): Այ թէ լաւ աշակերտ է, հա, հա, հա:

**ՍՈՒՐԻԿ.** (քնի մէջ) Ահա ծագեց կարմիր արև, սառբակէտ. տաք և պայծառ է օրը, ստորակէտ. բլիթ, բացականչական նշան... կատու, կատու, հարցական. սարի լանջը մահճակալ, ստորակէտ...

**ԱՆՆԻԿ.** (ծիծաղելով) Ի՞նչէր է դուրս տալիս:

**ՆԱԶԻԿ.** (ծիծաղելով) Դասն է պատրաստում:

**ԱՇՈՏԻԿ.** (վեր թռչելով և գերքը սեղանի վրա դնելով) Սպասեցէք, ես դրան մի լաւ կը դարդարեմ (աթոռի վրայից վերցնում է սփռոցը և պոկում է Սուրիկի վրա): Ի՞նչ հիանալի է (սեղանի վրայից վերցնում է մի թերթ թուղթ, լորրում է և սրածայր գլխարկ շինում): Պատրաստ է. (գլխարկը դնում է Սուրիկի գլխին): Հիմա արդէն զգեստաւորւած է (ամենքը ծիծաղում են): Բարև ձեզ, մեծապատիւ պարոն: (Քոյրերին) Ի՞նչ էք կանգնել... բարևեցէք...

**ԱՄԵՆՔԸ.** (ըստեւելով զանազան ձայներով) Բարև ձեզ, մեծապատիւ պարոն...

**ՍՈՒՐԻԿ.** (գերքը վայր գցելով և զարթնելով) Հըմ... Ի՞նչ է, ի՞նչ է: Սպասեցէք, մի խանդարէք, թողէք պարպակեմ... Հա, ի՞նչ էի տուում... Փայլուն արևն արդէն մայր մտաւ, լուսինն էլ վաղուց գնաց քնեցաւ... (երեխաները ծիծաղում են): Չէ, չէ, այդպէս չէ: Սպասեցէք, ի՞նչպէս է: Ուհ, շփոթեցրիք... (երեխաները ծիծաղում են): Ո՞րտեղ է գիրքս:

**ԱՍՏՂԻԿ.** Չարթիր, տես գիրքդ յատակի վրա է:

**ՍՈՒՐԻԿ.** (գիրքը տեսնելով) Ահա նա: (Իր հագուստը տեսնելով) Այս ի՞նչ բան է: Դուք էք ինձ այսպէս դարդարել (հանում է հագուստը. երեխաները ծիծաղում են): Բաս լաւ... ո՞վ հագցրեց, խոստովանեցէք: (Ամենքը ծիծաղում են): Չէք ասի, հո՞: Սպասեցէք հիմա: Այնպէս դարդարեմ ձեզ (յարձակում է երեխաների վրա. նրանք հոհոցով փախչում են: Բարձրանում է աղմուկ, իրարանցում: Սուրիկը գոռում է) Չէք փախչի, չէք փախչի:

**ԵՐԵՆԱՆԵՐ.** (վազվզելով) Չես բռնի, չէ, չէ: (Սուրիկը պոկում է նրանց վրա սփռոցը և գլխարկը: Նրանք վազում են դէպի դուռը և դիպչում ներս մտնող Տիկին Մարիամին):

## Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ի I.

ՆՈՅՆԵՐ, տ. ՄԱՐԻԱՄ եւ ՀԵՐԻՔՆԱԶ

(Ներս է մտնում տիկին Մարիամը, քանայինները  
ձեռին. նրա ետեւից Հերիքնազը: Երեխաները մո-  
րը տեսնելով, ետ են քաշում):

**Տ. ՄԱՐԻԱՄ.** Այս ի՞նչ աղմուկ է, դաս  
պատրաստելու փոխարէն... Ապրէք, շատ ապ-  
րէք... Քիչ մնաց ինձ վայր գցելիք: Հաւաքեցէք  
ամեն ինչ և տեղներդ նստեցէք: (Երեխաները  
հաւաքում են իրերը եւ նստում են իրենց տե-  
ղերը): Պատրաստէ՛լ էք դասերդ:

**ԱՄԵՆՔԸ.** (ըացի Սուրիկից) Պատրաստել ենք,  
պատրաստել ենք:

**Տ. ՄԱՐԻԱՄ.** (Սուրիկին) Իսկ դ՞ու:

**ՍՈՒՐԻԿ.** (զուխը քաշ գցելով) Գեռ բոլորը  
չեմ պատրաստել...

**Տ. ՄԱՐԻԱՄ.** Այդ չեղաւ, հոգիս. սովորիք  
շուտով (մօտենում է պահանջանին, հանում այն-  
տեղից մի աման եւ տալիս Հերիքնազին): Տար,  
որս մէջ ամա կաթը, իսկ կաթսան դատարկիք:  
Կաթն երկար ժամանակ պղնձի մէջ չեն պահի:

**ՆԱԶԻԿ.** (տետրակը ձեռին մօտենալով մօրը):  
Մայրիկ, տետրակս տես:

**Տ. ՄԱՐԻԱՄ.** (վերցնելով տետրակը) Է՛հ,  
սա ի՞նչ անփութութիւն է. բուսական կանոնա-  
ւոր արտադրել ես, բայց ծծան չես գրել մէջը

և գիրը աւերել է: Միւս անգամ էլ անփոյթ չը  
լինես (տետրակը տալիս է Նազիկին: Նազիկը  
տետրակը դնում է պայուսակի մէջ):

**ԱՍՏՂԻԿ.** (տետրակը մօրը տալով) Իմս էլ  
նայիք:

**Տ. ՄԱՐԻԱՄ.** (տետրակի մէջ նայելով) Ուհ,  
սիրելիս, այս ի՞նչ ազուաւի ճանկեր են: Երևի  
վրաս ես գրել: (Նազիկը գնում է միս սննեակը):

**ԱՍՏՂԻԿ.** Գրչածայրս փչացած է, մայրիկ:

**Տ. ՄԱՐԻԱՄ.** Հա, իհարկէ, գրչածայրն է  
մեղաւոր:

## Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ի II.

ՆՈՅՆԵՐ եւ ՕՍԱՆ

**ՕՍԱՆ.** (ներս մտնելով) Տիկին, Ստեփանի-  
կը ճշում է, երևի ծիծ է ուզում:

**Տ. ՄԱՐԻԱՄ.** Ծիծ է ուզում. չի կարող լի-  
նել. նա կուշտ է: Նոր եմ ծիծ տւել: Մի քիչ  
ման ամա և նանիկ ասս (Դայեակը գնում է:  
Հերիքնազին) Իսկ դու ի՞նչ ես կանգնել:

**ՀԵՐԻՔՆԱԶ.** Բա խոնուկ չը պիտի գնամ:

**Տ. ՄԱՐԻԱՄ.** Իհարկէ պէտք է գնաս. այս  
բոպէիս կասեմ, թէ ի՞նչ պիտի առնես (նայում  
է Աստղիկի տետրակը):

**ԱՇՈՏԻԿ.** (մօտենալով մօրը) Ես սովորեցի,  
մայրիկ, հարցրու:

**Տ. ՄԱՐԻԱՄ.** Յետոյ կը հարցնեմ, երբ մի  
քիչ աւելի ազատ կը լինեմ. իսկ հիմա կարող

ես գնալ: (Աշոտը դուրս է գնում: Նազիկը ընկնում է խաղալիքները և շարում սեղանի վրա):

ՍՈՒՐԻԿ. Մայրիկ, իսկ ես կարող եմ գնալ:

Տ. ՄԱՐԻԱՄ. Միթե դու էլ վերջացրիր:

ՍՈՒՐԻԿ. Ձե, մայրիկ, ես յետոյ կը սովորեմ:

Տ. ՄԱՐԻԱՄ. Ի՞նչպէս թէ յետոյ: Այդ ի՞նչ նորութիւն է. գնա իսկոյն պատրաստիր դասերդ: (Աշոտիկը միւս սենեակից ընկնում է գնդակ և սկսում է խաղալ):

ՍՈՒՐԻԿ. (դէմքը ծոճոնելով) Ձեմ ուզում:

Տ. ՄԱՐԻԱՄ. Սրան տեսէք է: Ի՞նչ անենք, որ չես ուզում: Ես էլ չեմ ուզում տանտիկնութիւն անեմ, բայց չանեմ ի՞նչ է: Այդպէս է դուրս դալիս քո կարծիքով:

ՍՈՒՐԻԿ. Հա, տանտիկնութիւն անելը հեշտ է. միայն պէտք է հրամայել, պրծաւ գնաց. ապա մի փորձիր ոտանաւոր սովորել:

Տ. ՄԱՐԻԱՄ. (ծիծաղելով) Արի պարապմունքներս փոխենք: Ես ոտանաւոր կը սովորեմ, իսկ դու տանտիկնութիւն կանես:

ՍՈՒՐԻԿ. (ոգևորւելով) Ի՞նչ լաւ կը լինի: Արի փոխենք... Հա... արի:

ԱՆՆԻԿ. (որ վաղուց կանգնել էր մօտ մօտ). Մայրիկ, ի՞նչու իմ տետրակս չես նայում (տետրակը կոխում է մօր ձեռքը):

Տ. ՄԱՐԻԱՄ. Ի՞նչ ես անում: Ձես կարող սպասել: Տեսնում ես ձեռիս բան կայ:

ՍՈՒՐԻԿ. (մօր փէշից քաշքշելով) Մայրիկ, արի փոխենք էլի:

ՀԵՐԻՔՆԱԶ. Ախրը ի՞նչ առնեմ, է:

Տ. ՄԱՐԻԱՄ. Գնա խնդրեմ խոհանոց և կաթը ամանի մէջ ածա. այստեղ պարապ սարապ մի կանգնի: Ես կը դամ և կտեսեմ, թէ ի՞նչ պէտք է առնես:

ՀԵՐԻՔՆԱԶ. (անքաւական ձայնով) Իհ: (Դուրս է գնում):

Տ. ՄԱՐԻԱՄ. (Աստղիկին) Ահա տետրակդ: Միայն վաղը, խնդրեմ, էլ այդպէս չը նախշես:

ԱՍՏՂԻԿ. (գնալով) Լաւ, մայրիկ, կաշխատեմ (գնում է միւս սենեակը):

Տ. ՄԱՐԻԱՄ. (Աննիկին) Տուր քոնք: (Աննիկը տալիս է տետրակը): Այ, սա լաւ է: Միայն սխալուել ես: Պէտք է գրէիր «անուշ», իսկ դու գրել ես «ապուշ»:

ԱՆՆԻԿ. (ժպտալով) Սխալուել եմ, մայրիկ:

Տ. ՄԱՐԻԱՄ. (տետրակը տալով Աննիկին) Առ ուղիբ: (Աննիկը նստում է սեղանի մօտ և սխալն ուղղում. յետոյ վերցնում է պարանը ու սկսում է թռչկոտել: Աստղիկը ընկնում է տիկնիկները և շարում աթոռի վրա):

ՍՈՒՐԻԿ. (մօրը քաշքշելով) Մայրիկ, ա մայրիկ...

ԱՍՏՂԻԿ. (մօրը մօտենալով) Մայրիկ, աուր ինձ փալաններ, ուզում եմ տիկնիկիս համար շոր կարեմ:

ԱՆՆԻԿ. Ինձ էլ:

Տ. ՄԱՐԻԱՄ. Սպասեցէք, սպասեցէք, սպասեցէք:

ՍՈՒՐԻԿ. Մայրիկ, լսիր էլի...

## Տ Ե Ս Ա Ր Ա Ն IV.

ՕՍԱՆ. (ներս ժանելով) Ստեփանիկը շատ է անհանգստանում, մատներն է ծծում...

Տ. ՄԱՐԻԱՄ. (ծեղքը ձեռքին խփելով) Այս ի՞նչ կրակ է... Ախր ասացի ես քեզ, որ խտրաես ու ման ածես. եթէ այդ էլ չի օգնի, այն ժամանակ շորերը արձակի, տես ի՞նչն է նեղացնում: Ախ, ի՞նչ դժար ես գլխի ընկնում: Այսպէս չի լինի. թողէք գոնէ մի քիչ մտածեմ, թէ առաջ ի՞նչ պէտք է անեմ: Ամեն կողմից կանչում էք. «առը, առ, գնա, տես»...: Չէ, դիմանալու բան չէ...

ՕՍԱՆ. (դուրս գնալով) Ինձ ի՞նչ, թող ծւայ:

ՍՈՒՐԻԿ. Մայրիկ, դժարանում ես տանտիկնութիւն անես, հա: Ա՛խ, երանի թէ ես տանտիկին լինէի, իսկ դու կամ ոտանաւորը բերան անէիր կամ գնայիր զբօսնելու:

Տ. ՄԱՐԻԱՄ. Իսկ որ մի ժամից յետոյ հրաժարւէս:

ՍՈՒՐԻԿ. Չեմ հրաժարւի, մի վախիր. միայն թէ բոլոր բանալիները տուր ինձ: Հ՛ը, թողնում ես, որ տանտիկնութիւն անեմ:

Տ. ՄԱՐԻԱՄ. Չհալէս մի տանի:

ՍՈՒՐԻԿ. (ժօրը գրկելով) Իմ անուշ, իմ անգին, իմ աղունակ մայրիկ ջան... մի օր միայն, միայն մի օր...

Տ. ՄԱՐԻԱՄ. Հա, հա, հա, հա. կարծում էի, հանաք ես անում, բայց տեսնում եմ, որ

խկապէս ուզում ես տանտիկին դառնաս: Որ էտպէս է, համեցէք, դառնուկա: Քո այդ ցանկութիւնը կը կատարեմ: (Նրեխաները զարմացած եւ ժպտալով նայում են):

ՍՈՒՐԻԿ. (ուրախացած) Հանաք չէս անում, մայրիկ:

Տ. ՄԱՐԻԱՄ. Հանաք անելու ի՞նչ ունեմ, ճիշտ եմ ասում:

ԱՇՈՏԻԿ. (քոյրերին) Օհօ, ի՞նչ սատանայ է. ուզում է մայրիկին փոխարինի:

ԱՍՏՂԻԿ. Ա՛յ թէ տակն ու վրա կանի:

ՆԱԶԻԿ. Մայրիկ, մի՞թէ իսկապէս թոյլ կը տաս սրան տանտիկնութիւն անի:

Տ. ՄԱՐԻԱՄ. Ի հարկ է. ի՞նչ կայ որ. մի՞թէ նման չէ տանտէրի: Ճիշտ է, մի քիչ փոքր է, կարծես տեսօք չէ, բայց այդ իսկոյն կարելի է ուղղել: Որպէսզի աւելի տեսօք դառնայ, ես կը հագցնեմ իմ շորերը: Այն ժամանակ, անշուշտ, ամենքդ սրան կը ճանաչէք եթէ ոչ տանտէր, գոնէ տանտիկին, խանում: Համաձայն ես:

ՍՈՒՐԻԿ. (ուրախ-ուրախ) Համաձայն եմ, ինչ կուզես հագցրու... միայն թէ կարգադրութիւններ անեմ:

Տ. ՄԱՐԻԱՄ. Շատ լաւ: Աննիկ, բեր նընջարանից իմ գլխանոցն ու կօֆտան:

ԱՆՆԻԿ. (գնալով) Համա կը ծիծաղենք, հա... (գնում է):

Տ. ՄԱՐԻԱՄ. (Սուրիկին) Նայիր, սիրելիս, որ ժամը երկուսին ճաշը պատրաստ լինի. լսում ես:

**ՍՈՒՐԻԿ.** Հանգիստ եղիլ:

**Տ. ՄԱՐԻԱՄ.** Եթէ ամեն ինչ կարգին կը պատրաստես, այն ժամանակ ես քեզ անա այսպիսի ձի կնծայեմ:

**ՍՈՒՐԻԿ.** (վեր թռչելով եւ ծափ տալով) Ձան, ջան, ձի էլ պիտի ստանամ. ի՜նչ հիանալի է: Ձի, ձի, ձի:

**ԱՇՈՏԻԿ.** Ախ, ի՜նչ երջանիկ է... Մայրիկ, ես էլ կուզեմ տանտիկնութիւն անեմ...

**ՆԱԶԻԿ.** Ես էլ եմ ուզում...

**ԱՍՏՂԻԿ.** Ես էլ...

**Տ. ՄԱՐԻԱՄ.** Թող առաջ սա փորձի:

**ԱՆՆԻԿ.** (կօֆտան եւ գլխանոցը սերելով) Ահա, մայրիկ, բերի:

**Տ. ՄԱՐԻԱՄ.** Դէհ, բարեկամ, հագիր (հագնում է Սուրիկին կօֆտան ու գլխանոցը: Այդ միջոցին Սուրիկը շարունակ թռչկոտում է): Ահա պատրաստ է արդէն: Ի՜նչ սագում է, հիանալի է: (Երեխաները ծիծաղում են): Հիմա ինչպէս է ձեր անունը, յարգելի պարոն-տիկին: Կարելի՞ է ձեզ տիկին Սիրան անւանել:

**ՍՈՒՐԻԿ.** (հագուստը դիտելով) Միւսոյն է, միւսոյն է... դու ինձ միայն բանալիները տուր: (Նազիկն ուղղում է նրա վրայի շորերը):

**Տ. ՄԱՐԻԱՄ.** (դռան մէջ) Հերիքնազ, Օսան, եկէք այստեղ: Նազիկ, այժմ թող դռան:

## ՏԵՍԱՐԱՆ V

ՀԵՐԻՔՆԱԶՆ ու ՕՍԱՆԸ ներս են մտնում:

**Տ. ՄԱՐԻԱՄ.** (Սուրիկի վրա ցոյց տալով) Ահա ներկայացնում եմ ձեր նոր տանտիկնուջը. **Տիկին Սիրան.** (Սուրէնը ձեռքերը դնում է կողքերին. ամենքը ծիծաղում են): Այսօրւանից ես դրան եմ յանձնում բանալիները, (բանալիները տալիս է Սուրիկին) և ամբողջ տնտեսութիւնը: Բան որ հարկաւոր լինի, սրանից ուզեցէք: Իսկ ես գնալու եմ գործի: Յետեսութիւն: (Գնալով դէպի դուռը) Ձրմոռանաք, տիկին Սիրան, եթէ ամեն ինչ կարգին կատարէք, կը ստանաք մի ձի: Այստեցէք գլխաւորապէս, որ ճաշը ժամանակին պատրաստ լինի: (Ժառաներին) Գնացէք ձեր գործին: (Հերիքնազն ու Օսանը ծիծաղելով դուրս են գնում): Իսկ դուք, երեխէք, խնդրեմ լսեցէք սրան: Մնաք բարով: (Գնում է):

**ԵՐԵՆԱՆԵՐԸ.** (նրա ետևից ծիծաղելով) Կը լսենք, կը լսենք:

**ԱՇՈՏԻԿ.** (Սուրիկին գլուխ տալով) **Տիկին Սիրան,** շնորհաւորում ենք ձեր նոր պաշտօնը:  
**ՔՈՅՐԵՐԸ.** (գլուխ տալով) Շնորհաւորում ենք, շնորհաւորում ենք:

**ՍՈՒՐԻԿ.** (ծանր ու մեծ) Դէհ, դուք հիմա ինձ հետ միք խօսի: Ես կատակ չեմ սիրում: Նստեցէք խնդրեմ և պատրաստեցէք դասերը:

**ԱՇՈՏԻԿ.** Ի՜նչ պատրաստենք, մենք մեր

դասերն արդէն պատրաստել ենք, պրծել: Դու դեռ չես սովորել. նստիր ու պատրաստիր:

**ՍՈՒՐԻԿ.** Հը, ես ձեզ ցոյց կը տամ: (Տալիս է նրանց իր գիրքը) Ահա վերցրէք այս գիրքը և մինչև երեկոյ սովորեցէք ամեն մէկդ տասը հատ ոտանաւոր: (Երեխաները ծիծաղում են):

**ԱՍՏՂԻԿ.** Ամեն մէկս տասը հատ ոտանաւոր... Այդ էլ ի՞նչ:

**ԱՇՈՏԻԿ.** Լաւ ես ասում, բարեկամ. մենք գլուխ տըրաքացնենք, իսկ դու ճանճ քշէս:

**ՍՈՒՐԻԿ.** Ես պէտք է կարգադրութիւններ անեմ:

**ՆԱԶԻԿ.** Մենք մեր դասերը զիտենք և էլ չենք ուզում սովորել:

**ԱՆՆԻԿ.** Եկէք տչքակապուկ խաղանք:

**ՆԱԶԻԿ.** Աւելի լաւ է խփեմ-փախչեմ խաղանք:

**ԱՍՏ.** ու **ՆԱԶ.** Խփեմ-փախչեմ, խփեմ փախչեմ:

**ՍՈՒՐԻԿ.** Իսկ ես կարծում եմ, որ լաւ կը լինի աւագակներ խաղանք: Ախ, ճիշտ որ, ես չեմ կարող խաղալ: Ի՞նչպէս մոռացայ:

**ԱՇՈՏԻԿ.** Իհ, եթէ չի կարող, մենք մենակ կը խաղանք: (Խփում է Աննիկին: Բացի Սուրիկից քոլորը փախչում են Աննիկից. Աննիկը դէս ու դէն է նայում, թէ ում խփի, յետոյ վրա է պրծնում ու խփում է Աշտոիկին. սա խփում է Աստղիկին, Աստղիկը Նազիկին: Նազիկը մտում է խփած. ամենքը փախչում են նրանից, վազում

դէսի դուռը. Նազիկը վազում է նրանց ետեւից: Խաղը շարունակում է միա սենեակներում. այնտեղից լսում է աղմուկ, ծիծաղ, ծիչ: Երեխաների բեմի վրա խաղալու ժամանակ Սուրիկը կանգնած է սենեակի մէջտեղը եւ նայում է մերթ պահարանին, մերթ քանայիններին, մերթ խաղացողներին):

**ՍՈՒՐԻԿ.** (Երեխաների դուրս գնալուց յետոյ) Հիմա, կարծեմ, կարող եմ բերանս քաղցրացնել (մ'օտեննում է պահարանին):

**ՏԵՍԱՐԱՆ VI**

**ՍՈՒՐԻԿ ու ՀԵՐԻՔՆԱԶ**

**ՀԵՐԻՔՆԱԶ.** (ներս մտնելով, ժպտն ևրբ-սին) Խանութ. (Սուրիկը քաց է անում պահարանը եւ ուտելու քան է որոնում: Հերիքնազը ձայնը բարձրացնելով) Խանութ: (Աւելի բարձր ձայնով) Խանութ. (մօտենում է եւ քաշում) Խանութ...

**ՍՈՒՐԻԿ.** (շուռ զալով) Ո՞ր խանութին ես ուզում:

**ՀԵՐԻՔՆԱԶ.** Ո՞նց թէ որ խանութին: Հիմա դուք էք մեր խանութը: Հէնց ձեզ եմ ուզում:

**ՍՈՒՐԻԿ.** Ախ, ես բոլորովին մոռացայ: Ի՞նչ ես ուզում. սպասիր մի քիչ, դեռ ժամանակ չունեմ:

**ՀԵՐԻՔՆԱԶ.** Ոչ, ես չեմ կարող սպասել, արդէն մէկից անց է, իսկ ճաշը դեռ չի պատ-

1881 (1881) 71-9581



ւիրած: Եթէ դուք չէք ուզում ճաշել, միւսնե-  
րը ուզում են:

ՍՈՒՐԻԿ. Ո՞նց թէ չեմ ուզում, ո՞վ ասաւ.  
ես էլ եմ ուզում, ի՞նչ ես ասում:

ՀԵՐԻՔՆԱԶ. Որ էսպէս է, խնդրեմ պատ-  
ւիրէք:

ՍՈՒՐԻԿ. Գնա մի համով բան պատրաս-  
տիր:

ՀԵՐԻՔՆԱԶ. Բայց ես չը գիտեմ թէ ինչ  
պատրաստեմ: Ինձ որ հարցնես բոլոր կերա-  
կուէրները համով են: Պատւիրեցէք, խնդրեմ:

ՍՈՒՐԻԿ. (մտածելով) Արի շօհօլադից պող-  
պղակ պատրաստիր:

ՀԵՐԻՔՆԱԶ. Լաւ, էլ ի՞նչ...

ՍՈՒՐԻԿ. Էլի մի բան... ես կարծում եմ  
կարելի է ժիւլէ շինել...

ՀԵՐԻՔՆԱԶ. Էլ ի՞նչ...

ՍՈՒՐԻԿ. (մտածելով). Հը... ի՞նչ պատ-  
րաստի... հոնը չի՞ կարելի տապակել:

ՀԵՐԻՔՆԱԶ. Չը գիտեմ... այդ դեռ չեմ  
պատրաստել: Սովորեցրէք, այն ժամանակ կա-  
րող եմ տապակել:

ՍՈՒՐԻԿ. Ոչ, ես ժամանակ չունեմ սովո-  
րեցնելու: Գիտես ի՞նչ. գնա ուղղակի երեք կո-  
պէկի ալ դրած վարունկ առ:

ՀԵՐԻՔՆԱԶ. Եսա բարի:

## ՏԵՍԱՐԱՆ VII.

ՆՈՅՆԵՐ ԵՆ ԵՐԵՅՍԱՆԵՐԸ (Ներս ևն վազում ճիչ ու  
ծիծաղով)

ԱՇՈՏԻԿ, ԱՆՆԻԿ, ու ԱՍՏՂԻԿ (մէկը միւ-  
սից ետոյ) Հերիքնապ, Հերիքնապ, Հերիքնապ:

ՀԵՐԻՔՆԱԶ. Ի՞նչ էք կամենում:

ՆԱԶԻԿ. Ճաշը պատրաստ է:

ՀԵՐԻՔՆԱԶ. Ոչ, դեռ նոր պատւիրեց:

ԱՆՆԻԿ. Ախ, ի՞նչքան պիտի սպասենք.  
մենք սոված ենք:

ԱՇՈՏԻԿ. Յարգելի խանում. ի՞նչ ես ա-  
նում. բան տուր ուտենք, քաղցած ենք:

ՍՈՒՐԻԿ. Սպասեցէք. առանց ձեզ էլ շատ  
գործ ունեմ:

ՀԵՐԻՔՆԱԶ. (Սուրիկին). Փող աւէք, խա-  
նութ գնամ:

ՍՈՒՐԻԿ. Փող... դու քո փողով առ:

ՀԵՐԻՔՆԱԶ. Ես փող չունեմ, իսկ առանց  
փողի խանութպանը չի տայ:

ՍՈՒՐԻԿ. Ի՞նչպէս թէ չի տայ: Գնա ասա,  
որ ես եմ պատւիրել: Յետոյ մայրիկը կը տայ:

ՀԵՐԻՔՆԱԶ. Ինչ կուզես ասա, միւսնոյն է  
առանց փողի նա բան չի տայ... Ես գնում եմ

խոհանոց, դուք փողի դարդը քաշեցէք (զնում է):  
ԱՇՈՏԻԿ. Էյ, խանում, շուտ փող ճարիր,

քաղցած ենք:

ԲՈՂՈՐ ԱՂԶԻԿՆԵՐԸ. Քաղցած ենք:

ՍՈՒՐԻԿ. Ես էլ քաղցած եմ, ի՞նչ անենք:

**ԱՇՈՏԻԿ.** Գիտէք ի՞նչ, երէկ ննջարանում մայրիկի ձեռքից մի կոպէկ ընկաւ և պահարանի ետեւը դուրսեց: Գնանք փնտռենք, դուցէ՛ գտնենք:

**ԲՈՂՈՐ ԱՂՋԻԿՆԵՐԸ.** Լաւ, լաւ (վազում են դէպի դուռը):

**ՆԱԶԻԿ.** Ախր մի կոպէկով ի՞նչ պիտի առնէք: (քացի Սուրիկից քոչորը դուրս են վազում):

**ՍՈՒՐԻԿ.** Այս ի՞նչ տեսակ կին է Հերիքնազը. փող է ուզում: (պահարանի կողմը նայելով) Պահարանում երևի մի որևէ քաղցր բան կը լինի: Քանի որ ոչ ոք չի խանգարում, մի լաւ համը տեսնեմ: (Բաց է անում պահարանը):

## ՏԵՍԱՐԱՆ VIII.

### ՍՈՒՐԻԿ ԵՆ ՕՍԱՆ

**ՕՍԱՆ.** (ներս մտնելով) Խանում, Ստեփանիկը ձէնը գլուխն է գցել. ի՞նչ էք հրամայում անեմ:

**ՍՈՒՐԻԿ.** Սպասիր, շուտով մայրիկը կը գայ, նրան ասա:

**ՕՍԱՆ.** Մայրիկդ ինձ պատւիրել է, որ ամեն բանի մասին ձեզ հարցնեմ. Գուցէ հարկաւոր է նրան լողացնել:

**ՍՈՒՐԻԿ.** Գնա ուղղակի ասա նրան, որ ես հրամայում եմ լռի:

**ՕՍԱՆ.** Նա ի՞նչպէս կարող է էտ տեսակ խօսքեր հասկանալ: Դեռ իսկի խելք չունի:

**ՍՈՒՐԻԿ.** Յետոյ ես ի՞նչ անեմ, որ խելք չունի:

**ՕՍԱՆ.** Էս իմ գործը չէ. Համեցէք խընդրեմ նրա մօտ, ես մենակ նրան պահել չեմ կարող (ընծում է Սուրիկի ձեռքից):

**ՍՈՒՐԻԿ.** (աշխատելով ձեռքից դուրս պրծնել) Օտան, թող ինձ... թող... (շարունակելով փորձել ազատելու). Ձեմ գայ... Ես չըզիտեմ, թէ նրան ինչ պիտի անեմ... (ազատելով): Ուհ, զահրա տարար: Գայեակը դու ես, հօ ես չեմ... զնա, ինչ ուզում ես արա... Սպասիր, դեռ մայրիկը գայ, գանգատւեմ քեզանից:

**ՕՍԱՆ.** Դէ, որ էտպէս է, էս ըտպէիս ես նրան կըբերեմ ձեզ մօտ (վազում է):

**ՍՈՒՐԻԿ.** Տէր Աստուած, ճանճի պէս ի՞նչ էք կպել ինձանից ու պոկ չէք գալիս: Շուտով մի բան հանեմ պահարանից ու դուրս ծիււկեմ այստեղից (պահարանը քաց է անում):

## ՏԵՍԱՐԱՆ IX.

### ՍՈՒՐԻԿ ԵՆ ՀԵՐԻՔՆԱԶ

**ՀԵՐԻՔՆԱԶ.** (ներս մտնելով) Ձեր մայրիկը ուղարկեց այս պաշարեղէնը:

**ՍՈՒՐԻԿ.** (ուրախացած) Ուղարկեց... ի՞նչ հիանալի է, իսկ դու ինձ էիր կպել:

**ՀԵՐԻՔՆԱԶ.** Հիմա համեցէք խոհանոց, պատւիրեցէք թէ ինչ պիտի անեմ: ես չըզիտեմ թէ ինչ պիտի պատրաստեմ:

**ՍՈՒՐԻԿ.** Բաս էլ ի՞նչ խոհարարուհի ես, որ ոչինչ չըզիտես: Վերցրու բոլորը և եփիր, պրծաւ գնաց:

**ՀԵՐԻՔՆԱԶ.** (վիրատրելով) Ի՞նչպէս կարելի է բոլորը եփել: Դուք ծաղրում էք ինձ: Համեցէք շուտով խոհանոց, պէտք է պատրաստեմ: Ամենքն ուզում են ուտել: Մայրիկդ էլ շուտով կըզայ և ձեզանից բացաարութիւն կը պահանջի (ըննում է կօֆտայից): Համեցէք:

**ՍՈՒՐԻԿ.** (ըարկացած) Հերիքնադ, թող ինձ, ի՞նչ ես ուզում ինձանից. ես չեմ ուզում քեզ հետ խօսել... Գնա կորիր: Իսկի բանի պէտք չես...

**ՀԵՐԻՔՆԱԶ.** Ի՞նչ... Ես բանի պէտք չեմ, հա: Այ թէ ինչպիսի խօսքերով էք դուք ինձ մեծարում: Շատ բարի: Ես էլ չեմ ուզում ձեզ մօտ ծառայել... Տէք խնդրեմ վարձս: Ես այս բոսպէիս կերթամ:

## ՏԵՍԱՐԱՆ X.

Ներս են մտնում ԱՇՈՏԻԿԸ, ՆԱԶԻԿԸ և ԱՆՆԻԿԸ (Նազիկը ձեռքին բռնած ունի գոգնոց)

**ԱՇՈՏԻԿ.** (տխուր) Ոչինչ չը գտանք. Աստղիկն էլ իր մատը դռան տակոյն արաւ, իսկ Նազիկը գոգնոցը պատռեց:

**ՆԱԶԻԿ.** (Սուրիկին) Դու յանձն ես առել մայրիկի բոլոր պարտականութիւնները: Դէհ նստիր հիմա, գոգնոցս կարկատիր: (Գոգնոցը զը-

ցում է Սուրիկի ուսին):

**ՍՈՒՐԻԿ.** (զոգնոցը դէն գցելով) Ի՞նչ ես դուքս տալիս: Նստիր ու ինքդ կարկատիր: ձեր դերձակն եմ, ի՞նչ է:

## ՏԵՍԱՐԱՆ XI.

ՆՈՅՆՆԻՐ և ԱՍՏՂԻԿ

**ԱՍՏՂԻԿ** (ներս է մտնում լաց լինելով և մատը շարժելով). Մնաս... վայ մնաս... վայ, վայ... Սուրիկ, մի դեղ տուր ինձ... Սուրիկ, շուտ արա... վայ, վայ... (մտնելով է Սուրիկին):

**ՍՈՒՐԻԿ.** Ախր ես սրտեղից քեզ դեղ տամ: Թքիր թղթի վրա և մատդ թղթով փաթաթիր, կանցնի:

**ԱՍՏՂԻԿ** (լաց լինելով) Վայ, վայ... Բահալիները քեզ մօտ են... հանիր դեղը:

**ԱՆՆԻԿ.** Հերիքնադ, ճաշը ի՞նչու չես պատրաստում: Ես քաղցած եմ:

**ԱՇՈՏԻԿ.** Ես էլ սաստիկ սոված եմ:

**ԱՍՏՂԻԿ.** (լաց է լինում) Վայ, վայ, մնաս, մնաս...

**ՀԵՐԻՔՆԱԶ.** Ես այլևս ձեզ մօտ ծառայելու չեմ: (Սուրիկի վրա ցոյց տալով) Մա ինձ վիրաւորեց և ես հրաժարեցի ծառայութիւնից: (Սուրիկին) Հաշիւս տէք:

**ԱՇՈՏԻԿ.** Ի՞նչպէս... դու դուքս ես գնում... Այդ ի՞նչպէս կարելի է:

ՆԱԶԻԿ. Մայրիկը քեզ չի թողնի:

ԱՍՏՂԻԿ. (լաց լինելով) Մի հեռանայ մեզանից. (շարունակում է լալ):

ՀԵՐԻՔՆԱԶ. Ոչ, պէտք է դուրս գնամ այստեղից: Ես էլ տէր ու տիրական ունեմ: (Սուրիկին) Հաշիւս տւէք խնդրեմ:

ՆԱԶԻԿ. (հեկեկալով) Այս քինչ է: Ճաշ չեն տալիս... Հերիքնագն էլ դուրս է գնում: Հիմա մենք քինչ պիտի անենք (սկսում է լալ):

ԱՆՆԻԿ. (հեծկտալով) Վայ մեզ... Մայրիկը գնացել է, Հերիքնազը ուզում է հեռանալ... քինչ անենք հիմա մենք (լալիս է):

ԱՇՈՏԻԿ. (Սուրիկին) Էս քինչ բան է, Սուրիկ. էս բոլորը քո բանն է, Մի բան տուր ուտենք. որտեղից կուզես ճարիր:

ՀԵՐԻՔՆԱԶ. (Սուրիկին) Էլի երկար պիտի սպասեմ ես:

ԱՆՆԻԿ ու ՆԱԶԻԿ (լաց լինելով) Սոված ենք, քաղցած ենք:

ԱՍՏՂԻԿ (արտասուելով) Վայ, վայ, մնաս...

ՏԵՍԱՐԱՆ XII

ՆՈՅՆԵՐ և օՍԱՆ

ՕՍԱՆ. (Ներս է մտնում՝ վերմակի մէջ փաթաթած երեխան ձեռքին): Ձեր փոքրիկ եղբորը քինչ որ բան է պատահել. դադարեց ճշալ և էլ չի շնչում: Վերցրէք իմ ձեռքից, ես բան չըզիտեմ, ես բոլորովին մեղք չունեմ: Ես պատաս-

խանատու չեմ. (փաթաթած երեխան դնում է Սուրիկի ձեռքը եւ փախչում: Սուրիկը սարսափած նայում է փաթեթին եւ սկսում է լալ):

ՆԱԶԻԿ. (հեծկտալով) Ուտելու բան տւէք:

ԱՆՆԻԿ. (լալով) Քաղցից մեռանք:

ԱՍՏՂԻԿ. (արտասուելով) Դեղ տւէք. վայ, մնաս, վայ...

ԱՇՈՏԻԿ. (Սուրիկին) Տուր քինձ բանալիները. (քաշում է բանալիները Սուրիկի ձեռքից): Տուր քինձ. (Սուրիկը բանալիները զցում է յատակի վրա եւ սաստիկ լալիս է: Աշոտիկը մտնում է պահարանին եւ սկսում է քրքրել):

ՀԵՐԻՔՆԱԶ. (Սուրիկին) Ահա թէ քինչ արիք դուք. տւէք իմ ոտճիկը... Թողէք վերջապէս դէնամ: Ես դեռ այս տեսակ տանտիկին չեմ տեսել: (Մօտենալով նրան) Հաշիւս տւէք խնդրեմ: (Սուրիկն ու աղջիկները թարծր ձայնով լալիս են):

ՏԵՍԱՐԱՆ XIII.

ՆՈՅՆԵՐ և տիկ. ՄԱՐԻԱՄ

Տ. ՄԱՐԻԱՄ (Ներս մտնելով) Ի՞նչ է եղել, քինչ է պատահել:

ԱՄԵՆՔԸ. (ըսցի Սուրիկից վազում են դէպի մայրիկը ճշալով) Մայրիկ, մայրիկ:

Տ. ՄԱՐԻԱՄ. Ի՞նչ էք արել դուք (երեխաները հեծկտում են, իսկ Սուրիկը լալիս է ու օրորում է երեխային) Բաւական է, մի լայ:

ԱՇՈՏԻԿ. (ցոյց տալով Սուրիկի վրա) Այ

այս բոլորը մեր տիկին Սիրանն արաւ. և ուտելու բան չի տալիս մեզ, և էլ ինքը գոռում է, լալիս:

**ՍՈՒՐԻԿ.** (լալով) Ինձ վի-րա-ւո-րե-ցին...  
Ես եր-բէք էլ տան-տիկ-նու-թիւն չեմ անի ..

**Տ. ՄԱՐԻԱՄ.** Հա, հա, հա, այ թէ ինչ:  
Լաւ խայտառակւեցիր: (Սուրիկի փաթեթը տեսնելով) Իսկ այդ ինչ ունես բռնած: (վախեցած)  
**Ջըլինի թէ Ստեփանիկն է.** (վերցնում է փաթեթը եւ քաց անում. մէջը փայտի կտոր է դրած)  
Հա, հա, հա: Մէջը փայտի կտոր է եղել: Հա, հա, հա (ցոյց է տալիս երեխաներին):

**ԲՈՂՈՐ ԵՐԵՆԱՆԵՐԸ** (հոճուալով) Փայտ է եղել: Հա, հա, հա:

**Տ. ՄԱՐԻԱՄ.** Այ ձեզ հրաշք: Իսկ ես ինչպէս վախեցայ: Դէ սուս կաց, մի լայ: Շատ սրտով ուզում էիր, ստացար: Բաւական է, մի լայ, հանգստացիր. (շոյում է նրա գլուխը. միւս երեխաներին) Իսկ դուք ինչու էք լալիս:

**ՆԱԶԻԿ և ԱՆՆԻԿ.** Մենք շատ սոված ենք:

**ԱՍՏՂԻԿ.** Իսկ ես մատս դռան տակովն արի:

**ՏԻԿ. ՄԱՐ.** Գնա, Հերիքնագ, սեղանը գցի (Հերիքնագը գնում է). Ասողիկ, դու մատդ սառը ջրի մէջ դիր, իսկ միւսներդ գնացէք ճաշելու: Ես ձեզ համար ուտելու բաներ եմ բերել: (Սուրիկին) Գուցէ դու էլի ուզում ես տանտիկնութիւն անել, տիկին Սիրան:

**ՍՈՒՐԻԿ.** (դադարելով լալուց) Ոչ, ոչ, ոչ: Աւելի լաւ է ոտանաւորներ կը սովորեմ... (երե-

խաները ծիծաղում են եւ գնում դէպի դուռ):

**ՏԻԿ. ՄԱՐ.** (երեխաներին, ծիծաղելով)

Գուցէ ձեզանից մէկն ու մէկը կուզենայ...

**ԵՐԵՆԱՆԵՐԸ** (ձեռքերը շարժելով) Ոչ, ոչ, մենք էլ չենք ուզում: Շուտով մեզ ճաշ տուր ուտենք (բոլորը փախչում են):

**ՏԻԿ. ՄԱՐ.** (երեխաների նտուից գնալով)  
Հա, հա, հա, այս էլ ձեզ տիկին Սիրանը... Հա, հա, հա... (դուրս է գնում):

Վարագոյր



## ՀԱՍԿԵՐ ԱՐՄԱԳԻՐԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

1. Ստ. Լիսիցեան. Պահմըտոցիկ . . . . . 5 կ.
- Ստ. Լիսիցեան. Ազատութիւն . . . . . 5 »
2. Սէյրի. Նոր վարժուհին . . . . . 5 »
3. Սէյրի. Ես իշխան եմ . . . . . 5 »
4. Ստ. Լիսիցեան. Գաղտնիք . . . . . 5 »
5. Ժորժիկ Մանւէլեան. Փնթի . . . . . 5 »
- Գ. Շահ-Պարոն. Գող—սիրալը դող . . . . . 5 »
6. Տիկ. Մարգարիտ. Դասարանում . . . . . 5 »
7. Յ. Քեօսեան եւ Ստ. Լիսիցեան. Քեռին . . . . . 5 »
8. Գլազընով. Տիկին Սիրան, Վ. Կ. Միրիանեան . . . . . 5 »
9. Ստ. Լիսիցեան. Քաջ զինուորներ . . . . . 8 »
10. Կ. Լուկաշեւիչ. Ծաղիկների մէջ . . . . . 12 »
11. Փէրրո. Տօնի համար . . . . . 10 »



8 2971

ԳԻՆԸ 5 ԿՈՊ.

Պահեստը՝ Թիֆլիս «ԳԻՐ» գրախանութուն: